ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2026 թվականի N 1077 - Ա

«ԳՅՈՒՄՐԻԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2026 թվականի հունիսի 17-ի N 364-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Համաձայնություն տալ «Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2026 թվականի հունիսի 17-ի N 364–Ա որոշմամբ բարեգործական որակված «Կրթական կենտրոնի նյութատեխնիկական ապահովում» ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն գյուղի 37 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 08-078-0132-0037 կադաստրային ծածկագրով 0.52981 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը (անշարժ գույքի

նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 08112024-08-0037 վկայական) «Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամին (այսուհետ՝ հիմնադրամ) ուղղակի վաճառքի միջոցով օտարելուն՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը կարող է օգտագործվել բացառապես բարեգործական ծրագիրն իրականացնելու նպատակով:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով նշված հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու գործարքի հիմնական պայմանները՝ համաձայն N 2 հավելվածի:

4. Առաջարկել Ախուրյան համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը հիմնադրամի կողմից՝ համաձայն N 2 հավելվածի մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը նպատակային նշանակությամբ չօգտագործվելու դեպքում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացնել առաջարկություն սույն որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ՝ լուծելով հիմնադրամի հետ կնքված պայմանագիրը և դադարեցնելով հողամասի նկատմամբ հիմնադրամի սեփականության իրավունքը:

5. Սահմանել, որ սույն որոշմամբ նախատեսված համապատասխան պայմանագրի նոտարական ձևակերպման, հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման և հողամասերի չափորոշիչների ճշգրտման հետ կապված ծախսերն իրականացվելու են հիմնադրամի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

23.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ